ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1-1 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար համակարգչային և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև (գնահատող հանձնաժողովի արձանագրությունը կցվում է) ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7 2021 թվականի նոյեմբերի 23-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2021 թվականի նոյեմբերի 26-ին տրամադրված պարզաբանումները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նարինե Նիկոլայանին:

Հեռախոս՝ 011 821 621:

Էլեկտրոնային փոստ՝ tender4@minurban.am:

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Արձանագրություն N 1-1
<<ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7>> ծածկագրով համակարգչային և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 26.11.2021թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյան
Կ. Բարսեղյան
Լ. Սարիբեկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Գ. Հակոբյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումների և պարզաբանման մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով համակարգչային և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի վերաբերյալ 2021 թվականի նոյեմբերի 23-ին ստացվել են հետևյալ հարցադրումները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովը տրամադրել է հետևյալ պարզաբանումները՝

Հարցադրում՝ N1

Հարգելի գործընկեր, 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված է, որ ապրանքի գույնը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ, ինչի պատճառով հնարավոր չե նախապես տալ գնային առաջարկ, քանի որ պատվիրատուն կարող է պահանջել օրինակ ուլտրամանուշակագույն, ինֆրակարմիր կամ պերլամուտր գույնի սարք, ինչը անհնար կլինի մատակարարել, կամ օրինակ կարող է պահանջել ասենք՝ դեղին գույնի սարք, ինչը նույնպես անհնար կլինի մատակարարել, քանի որ մեր կողմից առաջարկվող սարքերի մեջ չկա դեղին գույնի տարբերակ: Ելնելով վերագրյալից, խնդրում եմ նախապես համաձայնեցնել գույնը, որպեսզի կարողանանք տալ գնային առաջարկ, կամ նշել թե արդյոք կպահանջվի հետևյալ գույներից որևէ մեկը, թե ոչ: 1. Ուլտրամանուշակագույն, 2. Ուլտրակարմիր, 3. Դեղին, 4. Բաց կանաչ, 5. Նախշերով տարբեր գույներ կամ նախշերով նույն գույնի երանգներ, 6. Սպիտակի էտալոն, կամ սպիտակի կոնգրետ երանգ, 7. Դարչնագույն, կամ դարչնագույնի երանգ, 8. Կարմիր, կարմիրի երանգ, վարդագույն, 9. Բորդո, 10. Ծիածանի գույները, 11. Կապույտ կամ դրա երանգները, 12. Կանաչ կամ դրա երանգները, 13. Ոսկեգույն կամ արծաթագույն, 14. Կլանող սև (absolute black), 15. Մոխրագույնի հատուկ երանգ, 16. Նարնջագույն, 17. Որևէ երկրի դրոշի գույները, կամ դրոշների գույների զուգակցությունը, 18. Կապտականաչավուն, 19. Գազարագույն, կամ ծիրանագույն, 20. Վաղահաս բադիրջանի (սմբուկի), կամ այդ բույսի հասուն գույն, 21. Պեղլամուտր, 22. Փայտագույն (փաստի տեքստուրա, եթե այո, ապա նշել որ տեսակի փայտանյութի տեքստուրան) 23. Այլ գույներ, որոնք թվարկված չեն սույն ցուցակում (նշել հատկապես որը):

Պարզաբանում N1

Պատվիրատուի համար ընդունելի գույներն են՝ սև, սպիտակ, արծաթագույն, մոխրագույն և ոսկեգույն:

Հարցադրում՝ N2

Հարգելի պատվիրատու, Canon MF 237W տպիչ սարքի համար նախատեսված է տոներային քարթրիջ canon 737, որի տպագրման հնարավորությունը 2400 էջ է: Տեղի է ունեցել վրիպակ, խնդրում ենք շտկել:

Պարզաբանում N2

Հրավերի շտկման ժամկետը լրացել է: Ներկայացված առաջարկը կքննարկվի հայտերի բացման և գնահատման ընթացքում:

Հարցադրում՝ N3

Հարգելի գործընկեր, խնդրում եմ հայտնել թե արդյոք նախատեսված են թույլատրելի շեղումներ 6-րդ չափաբաժնի համար նշված չափսերի համար: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ

հաստությունը նշված է 8-12մմ, ինչը նշանակում է որ սարքի հաստությունը պետք է լինի առավելագույնը 1.2 սմ, խնդրում եմ հայտնել, թե արդյոք նշված հաստությունից ավելի հաստ շեղումներ նախատեսված են, և եթե այդպիսիք առաջարկվեն, արդյոք կլինի շտկման պահանջ, թե առաջարկվածը կհամարվի՞ համարժեք:

Պարզաբանում N3

Պատվիրատուի համար ընդունելի չափսն է 8-12մմ: Նշված հաստությունից ավել շեղումներ նախատեսված չեն, և եթե այդպիսիք կառաջարկվեն, ապա կներկայացվի շտկման պահանջ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Գ. Խաչատրյան

---------- Կ. Բարսեղյան

---------- Լ. Սարիբեկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան